Վարկատուի լոգո (սեղմել և բեռնել)

# ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գործողության սկիզբ ______ Ավարտ ______

Հարգելի՛ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ**, որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

## 1.

| | |
|---|---|
| **Վարկատուի անվանումը** | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ |
| **Գտնվելու վայր** | Ք. Երևան, Պուշկին 19 |
| **Հեռ.** | 010 59 23 23 |
| **Էլ.փոստ** | araratbank@arartbank.am |

## 2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**2.1 Վարկի անվանում** Ոսկու գրավադրմամբ ՀՀ դրամով վարկեր

**2.2 Վարկի գումար** 30.000-2մլն (կանխիկ եղանակով) ՀՀ դրամ

**2.3 Վարկի ժամկետ** մինչև 24 ամիս

**2.4 Տարեկան անվանական % (ՏԱՏ)** 13-17

*Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:*

**2.5 Տարեկան փաստացի % (ՏՓՏ)** 23.75

*Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելին, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:*

## 3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

☑ **3.1 Գրավ** Ոսկյա իրեր

☑ **3.2 Երաշխավորություն** Չի պահանջվում

## 4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**4.1 Վարկ/գրավ հարաբերակցություն** առավելագույնը 100% %

**4.3 Կանխավճար/վարկ հարաբերակցություն** Չի պահանջվում %

**4.2 Մարումների հաճախականություն**

◉ **Մայր գումար** Այլ

◉ **Տոկոսագումար** Այլ

*Այլ հաճախականության դեպքում նշել ձևը*

1.Վարկի մարումը ժամկետի վերջում, տոկոսագումարի գանձումը՝ վարկը սպանալու պահին ամբողջ ժամանակահատվածի համար
2.Ամսական հավասարաչափ
3.Վարկի մարումը ժամկետի վերջում, տոկոսագումարի գանձումը ամսական

## 5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

| | |
|---|---|
| **5.1 Վարկային հայտի ուսումնասիրության** | 1,000-10,000 |
| **5.2 Վարկի սպասարկման** | Չի պահանջվում |
| **5.3 Գրավի գնահատման** | Չի պահանջվում |
| **5.4 Նոտարական վավերացման** | Չի պահանջվում |
| **5.5 Գրավի ապահովագրության** | Չի պահանջվում |
| **5.6 Այլ միջնորդավճարներ** | Չի պահանջվում |

**5.7 Ընդամենը այլ վճարներ** 1,000-10,000

*Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար*

## 6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ⓘ *Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):*

*Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:*

## 7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

*ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ*

| | |
|---|---|
| **7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում** | 0.1% օրական |
| **7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում** | 0.2% օրական |
| **7.3 Այլ վճարներ** | Վարկային պայմանագրով սահմանված տարեկան տոկոս |

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող էկարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

## 8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

- ○ Անձնագրի և սոց. քարտի պատճեններ
- ○ 2-րդ անձի առկայության դեպքում՝ իր անձ. և սոց. քարտի պ
- ○
- ○
- ○
- ○
- ○
- ○

## 9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

**Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ** 1 *օր*

**Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ** 1 *օր*

**Վարկը տրամադրելու ժամկետ** 1 *օր* *(Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո:)*

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

**ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,**
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

**ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ**
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

**ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵԶ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

**ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»**
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

### ? Ի՞ՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

**Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝** այցելելով Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

»